

25750

Պրոլետարիատ բուհը յերկրութեան միացեան.

ԳՈՐԾԱԿԱՏԱՐԻ ՀԱՇՎԱՍԴՈՒՄԸ

334
9 - 82

ՀՐԱՄԱՐԴԱՊԻԹՅՈՒՆ ՀԱՅԱՊՈՂԻ

ՀԵՐԱԿԱՆ

1925 թ.

834

9-82

ՄՎ

630

25-90

Պողեաւեներ բոլոր չեւկրեւի. միացե՛ք.

ԳՆԵՑԵՔ ՅԵՎ ՏԱՐԱԾԵՑԵՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Լուս և տեսել)

1. Տիխոմիռով — Խնձօքս անել, զար կոռպերատիվի գործերը լավանան — զունավոր շապիկով, 32 յերես, զինն և 20 կ.

2. Կոռպերատիվի առաջին բայլերը, զունավոր շապիկով, յերես 40—զինն և 30 կոպեկ.

3. Պ. Թալյան — Գյուղացի՝, ուժեղացրու կոռպերացիան 20 յերես, նկարազարդ շապիկով—զինն և 5 կոպեկ.

4. Հ. Տ. Մ. — Խնձօքս պետք և լինի կոռպերատիվի գործակատարը—22 յերես, նկարազարդ շապիկով—զինն և 8 կոպ.

5. Խնձօքս պիտի նիմնել կոռպերատիվ խանութ—24 յերես, զինն և 10 կոպեկ:

6. Պատիսանվ.—Խնձօքս պետք և հաշիվ տա սպառովական բնկերության վարչությունը—26 յերես, զինն և 15 կոպեկ.

7. Պ. Թալյան—Կորցին շարքիները — 16 յերես, պատվերացրու, զինն և 8 կոպեկ.

8. Խայել—Մաւրիակը—26 յերես, զինն և 30 կոպեկ.

9. Կերտենցեվ. — Կազմակերպիր ինքու բեզ—56 յերես, զինն և 35 կոպեկ:

10. Առաջակայա — Կոռպերացիան ինչո՞ւ համար և պետք դյուզացման—զինն և 25 կոպեկ:

11. Դեմիրով. — Կազմակերպիցեր խանութային նամակատությունը — զինն և 20 կոպեկ:

[] — Գյուղը, տնտեսական նոր քաղաքականությունն ու կոռպերացիան—36 յերես, զինն և 25 կոպեկ:

13. Ա. Ա. Մատովսկի — «Խափանվեց» պիտի 3 գործությունումը—20 յերես, զինն և 15 կոպեկ:

14. Ալով—Վազիկների զեմ կովելու միջոցը պիտի 3 գործությունը. 32 յերես, զինն և 25 կ.

15. Գևեխով. — Խնձօքս նովաբել փայտմարները—24 յերես, զինն և 15 կոպեկ:

16. Գործակառաք հաօքեառուցք 28 յերես, զինն և 30 կ.

003
10622

ԳՈՐԾԱԿԱՏԱՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

ՊԵԿԵՍԱՐԴՆԵՐԻ ՅԵՎ ԶԵՂՋԵՐԻ ՄԸՆԻՆ

Ժամանակակից ու լրացրեց

Գ. Ե.



808
04-20

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Գործակատարի հաշվառման խնդիրը մեր գործնական կոսովերատիվ աշխատանքներում առաջնակարգ նշանակություն ունեցող խնդիրներից մեկն է :

Վաղուց ե , վոր մեր կոսովերացիայի աշխատողները այս ժամանակ հարցումներ են ուղղում կենտրոնին և արդարացի կերպով նշանց պատասխանին սպասում :

Ի՞նդքի լրջությունը մեզ ստիպեց դանդաղել , չը շատապել այս ժաման պարտադիր վորոշումներ հրատարակելու գործում : Մենք ստիպած ենք ի նկատի առնել մեր կոսովերացիայի առեսուրը , առջանքների ասսորտիմենտը , մեր կլիմայական առանձին պայմանները և այլն : Այդ բալորը գեռես վերջնականացես չուսումնասիրված խնդիրներ են , հենց այդ պատճառով մենք հրատարակելով ներկա թարգմանությունը (փոփոխած մեր իրականության համապատասխան) առաջարկում ենք մեր վարչություններին , վերըստուգիչ հաճախաժողովներին , հաշվական որդաններին՝ վորպես ժամանակավոր ուղեցույց :

Ուշագիր ու բարեխիղճ աշխատանքը տեղերում միացնելով այս ձեռնարկի ցուցումներին , մենք հավատացած ենք , ի վիճակի կը լինի ընդհանուր առմամբ զրական լուծում տալ «գործակատարի հաշվառման» լուրջ խնդրին :

ԹԱՐԳՄԱՆԻՉ

31 սպասուի 1925 թ .
Յերեվան .

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործակատարի կողմից ապրանքները ճշգրիտ ու պարզ հաշվեառման յենթարկելու ինդիբը առաջադրված և սպառողական կոռոկերացիայի կողմից :

Մասնավոր առետրականի համար գործակատարի կատարելէք հաշվեառումը ինքն ըստ ինքյան հետաքրքրություն չի ներկայացնում : Մասնավոր խանութի ծախսաբարի (գործակատարի) աշխատանքը գնահատվում և այդ աշխատանքի հետևանքներով—թե ինչքանի՞ ապրանք և ծախված և ինչպիսի՞ ապրանք և ծախված, իսկ թե ի՞նչ յեղանակով, ի՞նչ միջոցներով և գործակատարը այդ հետևանքներին հասել, զա մասնավոր առետրականին շատ քիչ և հետաքրքրում :

Կարող և գործնականում նույնիսկ ապրանքի պակասորդ լինել, այդ ել վոչինչ, խանութատերը կարող և ասել. «Ինչ ուզում ես, արա՛, միայն թե յես չփառվեմ» :

Իսկ յեթե ավելորդ ապրանք լինի խանութում—մասնավոր խանութատերը բոլորովին չի անհանդատանում. գործակատարին նա յերբեք չի մեղադրի, թե քաշի ու չափի մեջ խարդախություններ են արել:

Հենց այդ և պատճառը, վոր սպառողական կոռոկերացիան չի կարող սպավել մասնավոր խանութում աշխատող գործակատարի հաշվեառման պատրաստի փորձից. նա պետք է իր սեփական փորձը մշակի :

Սպառողական կոռոկերացիայում առետուրը հասարակական գործ ե, իսկ պարզ, բոլորի համար հասկանալի հաշվեառվությունը ամեն մի հասարակական գործի կանոնավոր տանելու հիմնական պայմանն է :

Գործակատարի կատարելիք ճշգրիտ ու պարզ հաշվեառումը կոռոկերատորների համար անհրաժեշտ և մի շարք պատճառներով :

Սպառողական ընկերությունը մի այնպիսի ձեռնարկությունն չե, վոր գնահատվում և միայն նրա հաշվեկշռով, առանց խոր ծանոթության, թե գործը ինչ հիմքերի վրա յե դրված : Սպառողական ընկերությունը պիտի իր անդամներին բավարարի հասարակական կաղմակերպությանը վայել յեղանակներով : Ապրանքների

Հաշվեառման գործում պետք է լինի լիսկասար պարզություն ու վատահաւթյուն, զոր վոչ ապրանքի պակասորդ կտա, վոչ եւ ավել-ցուկ-ահա թե ինչ և պահանջվում ընկերության առևտրի համար:

Ընկերության ղեկավարները չեն կարող բավականանալ միայն գործի արդյունքներով: Երանք չեն կարող անտարեր լինել դեպի այն հարցը, թե ի՞նչ միջոցներով, ի՞նչ յեղանակներով են այդ արդյունքներն ստացվել: Միայն գործակատարի կատարելիք երշ-գրիտ ու կանոնավոր հաշվեառումն է վատահություն ներշնչում, այն մասին, թե ընկերության դրած նպատակները չեն խախտվում, թե գործակատարի հաշվեառման համար գործադրվող միջոցները հասարակակայնության սկզբունքները չեն խախտում:

Սպառողական կոռպերացիայի պաշտպանները, մատնանշելով կոռպերատիվների կանոնավոր հաշվեառման անհրաժեշտությունը, նպատակ ունեն հականարկած տալ այն բաղմաթիվ հարգածներին, վորոնց ընդհանուր միտքն այն ե, թե «Սպառողական ընկե-րություններում իրերի գրությունը բոլորվին եւ ավելի լավ չե, քան մասնավոր խանութներում»:

Հաշվեառի ամուր հիմքերի վրա դրված լինելին անհրաժեշտ են առեւ կոռպերատոր-գործակատարի համար: Ինչպես զոր ընկե-րության համար վայել չե իր ծառայողներին «կասկածի տակ քոլ-նելլ»՝, այնպես եւ զործակատարը, պաշտպանելով իր արժանա-պատվությունը, պիտի պահանջի կանոնավոր հաշվեառում: Նա պիտի պահանջի, զոր թե՛ վարչության անդամները, թե՛ վերստու-գիշ հանձնադուռի անդամները և թե՛ կոռպերատիվի շարքային անդամները հասկանան՝ թե ինչ բան է «պակասորդը»: Ի՞նչ պիտի հասկանալ, յերբ ասում են «պակասորդը»: արդյոք գա զողություն ե, անբարեխզություն ե, անփորձություն ե, առևտրի անհար-ժեշտ պայմաններն են, պատահականություն ե, թե՛ ապրանքի շատ ընական մախումն ե—չորսանուու, հոսելու, կոչելու հետե-վանքով՝ ապրանքի քաշի նախորչական է: Գործակատա-րը պիտի ամեն միջոցներով նպատակ դնի, զոր նույնիսկ շար-քային անդամները հասկանան այդ ամենը, զոր նրանց համար այդ նորություն կամ գյուտ չը լինի, այլ մի շատ սովորական գիտե-լիք:

Հաշվեառման խնդրի ենրա գժվարությունների հետ ծանո-թանալը միաժամանակ ամենապարզ կերպով հասկանալի յե զարձնում վարչության ու ծառայողների աշխատանքի ընույթին ու պարմանները: Իսկ յեթե կոռպերացիայի պակասորդի առաջակա-րի ամենապարզ կարությունը հասկանալը հաշվեառման միջու-թյունները խառնվում, խճճվում են: Սպասվող ոգուտի անդ ստացվում է պակաս ոգուտ, զուցե և վեսա: Ընկերության մեջ բո-լորի արամագրությունը վատանում է, ոկալում են կասկածանք-ներ, մեկ-մեկու գեմ մեղաղբանքներ ու հանցավորին գոնելու անվերջ վեճեր: Իսկ համար՝ մեղաղբարը, հանցավորը անփորձու-թյունն ե, ապրանքի ճշգրիտ ու կանոնավոր հաշվեառման դիտե-լիքներին անձանոթ լինելը:

Եր մի կողմից, վարչությունն ու ծառայողները մյուս կողմից, փոխազարձարար իրար հասկանում են, ապա սպառողական ըն-կերության գործերի հաջողությունը շատ զգալի չափով ապա-հովված ե:

Սպառողական կոռպերացիան պիտի լույս ու պարզություն մազնի այնահեղ, ուր մինչեւ հիմա գաղտնիքներ ու խորհրդավորու-թյուններ կային: Մինչդեռ «պակասորդ» առաջի անհասկանալիու-թյունը, մութ լինելը միշտ շատ բացասական հետեանքներ և ունեցել՝ առիթ տալով ամեն տեսակ չարախոսությունների, ամե-կոնների ու բամբառանքների:

Կոռպերատիվ կազմակերպությունների ամենալուրջ հոգա-ցողություններից մեկը ներկայումս կոռպերատիվորեն-դաստիա-րակված աշխատավորների պատրաստման գործն է, աշխատավոր-ներ, վորոնց մեջ պիտի խորանան նոր սովորություններ, նոր գործելակերպ: Գործակատարի հաշվեառը կոռպերատիվ խանութ-ների աշխատողների դաստիարակման ամենակարեվոր միջոցնե-րից մեկն է:

2. ՀԱՇՎԵԱՌՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Հաշվեառումը հեշտ ու կանոնավոր հիմունքների վրա զնելը պահանջում է մեծ ուշադրություն թե վարչության անդամների ու հաշվեառարի կողմից, թե զործակատարի կողմից, բայց զորում, շատ կարեոր ե, զոր ընտրվի հաշվեառման նպատակահարմար յեղանակ ե, վոր այդ յեղանակը հասկանալի լինի զործին մատնա-կից բոլոր անձնավորությունների համար: Յեթե հաշվեառման յեղանակը աննպատակահարմար ե և նրա կիրառումը լավ չը բըռու-նված, ապա, յեթե նույնիսկ ամենաբարեխիղձ վերաբերմունք լինի բոլորի կողմից, անխուսափելի յեն թյուրիմացությունները: Սառուցումների ժամանակ ապրանքների պակասորդ ե յերեան հան-վամ, և ահա ընկերության բոլոր հաշվիներն ու փոխհարարերու-թյունները խառնվում, խճճվում են: Սպասվող ոգուտի անդ ստացվում է պակաս ոգուտ, զուցե և վեսա: Ընկերության մեջ բո-լորի արամագրությունը վատանում է, ոկալում են կասկածանք-ներ, մեկ-մեկու գեմ մեղաղբանքներ ու հանցավորին գոնելու անվերջ վեճեր: Իսկ համար՝ մեղաղբարը, հանցավորը անփորձու-թյունն ե, ապրանքի ճշգրիտ ու կանոնավոր հաշվեառման դիտե-լիքներին անձանոթ լինելը:

Ենթաք բերգած համառոտ ցուցմունքները նպատակ ունեն:

այս հարցերի մասին տալ ամենակարեոր տվյալները։ Ապրանքի հաշվեառման դժվարությունը կայանում է գլխավորապես նրանում, վոր ապրանքը փողի նման չե։ Ոպրանքի թե գինը, թե քաշը, թե ծագման փոփոխական են։ Վորպեսզի ճիշտ հաշվեառում լինի՝ կարեւոր է, վոր զիտենաք, թե ինչքան մուտք ենք ունեցել, ինչքան և ծախվել և ինչպիսի մնացորդ պիտի ունենանք։ Յեզ ապա, յերբ խանութում փաստորին յեղած մնացորդը մենք ստուգում ենք, մենք կարողանում ենք իմանալ, թե խանութում արդյոք այնիքան ապրանք կա, վորքան պիտի լիներ, թե՞ մենք իսկապէս վոր պակասորդ ունենք։

Յ. ՀԱՇՎԵԱՐՄԱՆ ՅԵՂԱՆԱԿԸ

Հաշվեառման յերկու յեղանակ՝ գոյություն ունի. 1) տեսակ-ներով—քանակով և 2) գումարային—ըստ արժեքի։

Քանակական հաշվեառումը կայանում է նրանում, վոր հատուկ գրքի մեջ հաշիվ և տարվում, թե ամեն մի ապրանքից ինչքան և ստացվել և ինչքան և ծախվել։

Հաշվեառման այդ յեղանակը նպատակ ունի հնարավորություն տալ՝ ամեն մի ապրանքի մնացորդի ստուգում կատարել, յերբ վոր կամ ենում ենք, բայց փորձը ցույց է տվել, վոր հաշվեառման այդ յեղանակը բոլորին չի կարելի կիրառել այնպիսի մակրածախս խանութներում, ուր ծախվում են ուստեստեղեն, մանուքակառւրա, գարանտերեյա և այլ մանրունք։

Այդպիսի հաշվեառման անգետքության հիմնական պատճառները հետևյալներն են։

Պահանջվում է, վոր յուրաքանչյուր ապրանքի համար առանձին հաշիվ պահպի է, վոր գլխավորն է, ամենասուշադիր ու մանրակիր կապով զրանցման յինթարկի ուղևորների ամենաքիչ քանակությամբ ապրանքների առանձին մուտքն ու առանձին յերք։ Իսկ այդ հնարավոր է, յեթե կոոպերատիվն ունի բավական մեծ թվով զրագետ ու զործին հմաստ աշխատակիցներ։ Այդ ել իր հերթին կոոպերատիվի վաճառած ապրանքի վրան մեծ վերադիր ծախս է զնում։ Գրանցման աշխատանքը մինենույն է ծախվում և մեկ կիլոգրամ ապրանք, թե 1000 կիլոգրամ։

Բացի այդ՝ զնում ապրանքները հաշիվներից ապրանքային դրագ մուտք զրելիս՝ կամ ծախալած ապրանքները չեկերից յերք գրելիս՝ հնարավոր են սիալներ։ Այդ սիալները կարելի յե զանել շատ ուշադիր ստուգումների միջոցով, իսկ սիալների մի մասը (մի

անդրանքի գրանցումը մի այլ ապրանքի հաշվով) հնարավոր եղանել միայն աշխատանքի կրկնությամբ, այսինքն նոր գրանցումների միջոցով։ Այդ բոլոր ապրանքների քանակական հաշվեառումը սպառողական կոոպերատիվների համար դարձնում է թանգ, ծանր, և նպատակին ընցանող մի աշխատանք։ Միաժամանակ ապրանքների մնացորդների ստուգման ժամանակ ստացվում է մի տեսակ ապրանքի սպակասորդ, մի այլ ապրանքի ավելցուկ և մենք ստիպված ենք վերջ ի վերջո ապրանքների հաշվեառումը կատարել կամ այսականորեն, առանց վորոց սկզբունքների։ Այնպես վորա աշխատանքի վերջում, մանավանդ յեթե անուշադիր ենք յեղել զների բարձրացման և իջնցմանը—չենք նշանակել զեղջերն ու այլ մսխումները,— մենք ստանում ենք հաշվառման կատարյալ բացակայություն և ապա անհնարինություն թե խղճով, թե իրավաբանական հիմունքներով պակասորդը վորեկ մեկից պահանջելու։

Հենց այդ պատճառով սպառողական ընկերությունները պետք են ապրանքները հաշվեառի յենթարկեն գումարային յեղանակով։

Գումարային հաշվեառումը կայանում է նրանում, վոր խանութի ապրանքը հաշվի յե առնվում վահանքի զների ընդհանուր արժեքի ամբողջ գումարով։

Հաշվեառման այս ձեւը մասնավոր խանութներում յերբեք չի կիրառվում, իսկ սպառողական ընկերություններում կիրառելի յե այն պատճառով, վորովհետեւ վերջինս առեստուր և անում բոլորովին այլ հիմունքներով։ Մասնավոր խանութպանը ապրանը ծախում և ինչպես ուղղում է, ում ուղղում է, կամ ինչպես իր քեֆն և տարիս՝ մի ապրանք, մեկին կարող է թանգ ծախել, մյուսին եժան, նրա նպատակը միայն վոր աշխատելն է։ Ուրեմն նրա համար անհայտ է, թե այս կամ այն ապրանքը ծախելուց նա ինչքան վոր է ստանալու ընդհանուր առմամբ։

Սպառողական ընկերության մեջ բոլորովին այդպես չե։ Սպառողական ընկերությունը, վորպիս հասարակական կազմակերպություն, պիտի իր ապրանքները բոլորին ծախի, առանց բացառության, մինույն գներով։^{*}

^{*}) Ճիշտ և մեր կոոպերատիվներում դեռ ևս ապրանքները ծախվում են տարբեր գներով՝ անդամներին և վոչ անդամներին, սակայն այդ յերեւյթը ժամանակավոր է, բայց վորում, մեր հաշվեառման գործի կանոնավորելու և առողջացման համար այդ ժամանակավոր յերեւյթին պիտի որ առաջ աշխատենք վերջ տալ։

ԵԱՀՆՈԹ. ԹԱՐԳՄ.

Իսկ այդ հնարավոր ե անել միայն այն գեղքում, յերբ նախորդ կարելի յէ վորոշել խանութը մտնող յուրաքանչյուր ապրանքի ծախելու (վաճառքի) գինը։ Հենց այդ զնո՞վն ել գործակատարն ապրանքը պիտի ծախի՝ բոլոր ցանկացողներին անխտիր, և յեթե յուրաքանչյուր ապրանքի գինը հայտնի յէ, ապա ընկերությունը կարող է նախորդ հաշվել, թե գործակատարն ինչքան և ստանալու այս կամ այն ապրանքի ծախելուց։ Այդ նպատակով՝ խանութ մտնող յուրաքանչյուր ապրանք զնահատվում է և գորոշվում է, թե գործակատարը ավյալ ապրանքի գիմաց ինչքան և պարտավորվում փառով վերադարձնել ընկերությանը։ Գործակատարն այդ գումարներով ել ապրանքը առհաշիվ ընդունում է և պարտավոր ե վարչությանը հաշիվ տալ և պատասխանառությունը։

Պատասխանառու գործակատարի կատարելիք հաշվեառումը հետեւալ ձեռվ և լինում։

Վորոշվում է թե գործակատարին ինչ գումարի արժողությամբ ապրանք ե արվել, վաճառքից գործակատարն ինչպիսի գումար և գործարել և վարչությանը վերադարձրել, ինչքան և նա ապառիկ տվել (վարչության թույլավությամբ ի հարկե), ինչքան գեղջեր և այլ մասնակին գործակատարի հաշվից պիտի գուրս գրել։ Այսպիսով՝ խանութին առհաշիվ հանձնված ապրանքի գումարի և խանութի հաշվից զուրս գրված ապրանքների գումարի առբերությունը—խանութի մնացորդ ապրանքների արժեքը ընդհանուր գումարն է։

Կարելի յէ ստուգում կատարել և հաշվել, թե գրքերի մնացորդը համապատասխանում է արդյոք իրական մնացորդին։ Այդ ձեռվ կարելի յէ իմանալ, անկորուստ և արդյոք գործակատարին հանձնված ապրանքը, թե՝ «պակասորդ» կա։

Ի հարկե, հաշվեառման այս յեղանակն իր նպատակին և հասնում միայն այն գեղքում, յերբ գործակատարն ապրանքները ծախում և այն զներով, վորոնք վարչության կողմից նախորդը վորոշված էն։ Հենց այդ պատճառով պիտի խիստ կերպով հսկել, վոր գործակատարն ապրանքները վաճառի նշանակված զներով։ Խոկ յեթե կարեօր և լինում վորեն ապրանքի գինը փոփոխության յենթարկել, ապա այդ փոփոխությունից գործակատարին առհաշիվ տված ապրանքների ընդհանուր արժեքը նույնպես փոխվում է։ Ապրանքը թանդահալու գեղքում գործակատարին առհաշիվ մտաք և դրվում այդ վերադահատման գումարի տարրերու-

թյունը։ Ապրանքի գինն իջեցնելու գեղքում—նրանից համապատասխան դումար յեթք և գրվում։ Հասկանալի յէ, վոր այդ զների փոփոխությունները կատարվում ե՝ յուրաքանչյուր անդամ փաստական կերպով ստուգելով (համարելով կամ կշռելով) խանությունը ապրանքների մնացորդը։

Մի քանի սպասողական ընկերություններ հատուկ պահեստներ ունեն, վորեղից ապրանքները բաժնում են իրենց բաժանմունքների մեջ։ Այդ պահեստը կառավարվում է պահեստապետի կողմից։

Պահեստապետին ևս հաշվեառման պիտի յենթարկել խանութի գործակատարի նման, ուրիշ խոսքով ասած ապրանքը պահեստապետին պիտի հանձնել նույնպես զնահատված՝ վաճառքի ընդհանուր արժեքի գումարներով։

Պահեստապետը սովորաբար պահվում էն մեծ քատնկությամբ ապրանքներ և այն ել ծանրակշիռ, որինակ՝ ալյուր, աղ, նավթ, չափար և այլն։ Այդ ապրանքների զները չուտ-չուտ փոփոխվում են։ Պարզ է, վոր յեթե խանութում վորեն ապրանքի գինը փոփոխության և յենթարկվում, նույնը պիտի կատարվի համ պահեստում։

Վորպեսզի այդպիսի գեղքերում արդ ծանր ապրանքների հաշվելը (կշռել կամ համարել) յերկար ու ծանր աշխատանքի պատճառ չգառնա՝ պահեստաներում, բացի զումարային հաշվից՝ պիտի պահել նաև ապրանքների քանակական հաշիվ։ Գների փոփոխության գեղքում իրական մնացորդը համարվում է պահեստի ապրանքային գրքի մնացորդը—առանց նորից կշռելու կամ ստուգելու։

Գների փոփոխությունների գործը հաշվեառման յենթարկելու ժամանակ այդ հաշվեառումը պահեստի աշխատանքը շատ և թեթևացնում։

4. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՔԱՇԻ ԲՆԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՆԵՐԸ

Ապրանքը փողից գանապանվում և նրանով, վոր նա իրենից մշտական մի մեծություն չի ներկայացնում։ Թե նրա արժեքը, թե նրա քանակը փոփոխության են յենթարկվում ապրանքը խանութ մտնելուց, այնաև պահվելուց մինչև փաստորեն վաճառվելու ժամը։ Վորպեսզի գումարային հաշվեառումը ձիչտ պահվի, անհրաժեշտ և հաշվեառման ժամանակ ի նկատի առնել այդ բոլոր տատանումները։ Յեթե այդպես չվարպենք, ապա գործակա-

տարի հաշվեառման գործը յերբեք ճիշտ հետեւանքներ չի տա և մեծ ժամանք ապրանքների փաստական մնացորդը գրքերի մնացորդներից պակաս կը լինի:

Գործակատարի հաշվեառման ժամանակ պիտի ի նկատի առնել հետեւալ կորուստները:

Ա. Քաշի պակասորդներ

Ամենից առաջ մենք գործ ենք ունենում այսպես ասած քաշի պակասորդների հետ։ Քաշի պակասորդ մենք անվանում ենք այն տարրերությունը, վոր փաստորեն գոյություն ունի ապրանքի քաշի և հաշվի (կամ ֆակտուրայի) մեջ ցույց տված քաշի մեջ՝ բառ վորում, այդ տարրերությունն առեւտրական ողջորությունների համաձայն, հնուց՝ ի վաս կամ ի հաշվի գնորդի յեւ լինում։

«Քաշի պակասորդը» առաջանում և նրանից, վոր ապրանքի փաթեթի, (արկղի, տակառի, առպրակի և այլն) արժեքը—ամբողջին կամ մասամբ ապրանքի հայթայթողն ապրանքի ընդհանուր արժեքի վրան և գալիս և նրա քաշը ևս ապրանքի քաշին գումարում։ Այսպիսով հաշվի մեջ ապրանքի քաշն ավելի յեւ ցույց տրվում, քանի իսկապես ապրանք և բաց բողնվում։ Որինակ՝ մոնպասյեն գործարաններից շատերը բաց են թողնում 4 կիլոգրամանոց թիթեղյա բանկաներով, արժեքն ել այդպես և հաշվվում, մինչդեռ այդ բանկայի մեջ միայն, որինակ՝ 3 ու կես կիլոգրամ՝ մոնպասյերի լցված։ կես կիլոգրամ (500 զրամ) քաշի պակասորդը և նրա արժեքը թիթեղյա բանկայի արժեքն և հանդցնում։

Պարզ է, վոր յեթե պատասխանառու գործակատարին 3 ու կես կիլոգրամ և մոնպասյե տրվում ծախելու համար, նրա հաշվին այդ քանակի արժեքը պիտի գրել և վոչ ավելի։

Յեթե ապրանքի փաթեթը (տարան) տեղում արժեք ունի, այն ևս առանձին պիտի գնահատել և տալ գործակատարին վորպիս ապրանք։

Բ. Կորուստներ ապրանքը պահելուց

Կամ վորոշ ապրանքներ, վորոնք խանութում մնալուց կամ պառկելուց չորանում, փոշիանում կամ գոլորշիանում են, այսինքն իրենց քաշի մի մասը կորցնում են։ Այդ կորուստներն առաջանում են ապրանքների ընական հատկություններից և զանազան ապրանքներ զանազան կորուստներ են տալիս։ Ապրանքների հաշվեառման ժամանակ այս ևս պիտի ուշադրության առնել։

Գ. Կորուստներ, վոր առաջանում են վահանքի ժամանակ

Յեթե մենք մեծաքանակ քաշով ապրանք, որինակ մի տոպրակ չաքար, 100 կիլոգրամ, սկսենք մանր մասերով քաշել (որինակ, 400-ական զրամով—կամ 1-ական զրամնքա մոտավորապես) և յեթե մենք ճիշտ ու մաքուր քաշով գաճառելու լինենք, մենք յերեք 250 մանր քաշ (100 կիլոգրամը հավասար և 250×400 -զրամի) չենք ստանալ այլ մի քիչ պակաս։ Այդ պակասը մենք անվանում ենք «կշռելու պակասորդ», վորը հաշվեառման ժամանակ նույնպես չպիտի մոռանալ, մի շարք ապրանքների քոչը պակասում և կաշելուց (որինակ, յուզը կամ մեզը ամանի պատերին և կաշում կամ այն գդալին՝ վորով ապրանքը մաս-մաս վերցնում են) կամ ապրանքների կարելուց, (որինակ՝ յերշիկ, պանիր և այլն)։

Դ. Կորուստներ – ապրանքների փոխադրությունից

Ապրանքների տեղափոխության ժամանակ լինում են կորուստներ կամ անխուսափելի (փոշիանում) կամ պակասորդ կամովին (զողություններ)։

Վորպեսզի այդ պակասորդները հաշվեառի յեթարկեն՝ անհրաժեշտ և, վոր պատասխանառու գործակատարն ապրանքը վարչությունից ընդունի ստուգելով նրա քաշը։ Հասկանալի յեւ, վոր ապրանքը յերկաթուղուց կամ նախահանգատում ընդունելիու ևս պիտի ստուգել ու հետո միայն ընդունել։

Այս բոլոր զեպքերում, ի հարկե, ի նկատի պիտի տոնել նաև փաթեթների (տարայի) զրությունը։

5. ԶԵՂԶԵՐ ԲՆԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վերեսում հիշած բնական կորուստների, քաշի պակասորդների, չորացման, փոշիանում և այլ պակասումների ամենաճիշտ հաշվեառումը կայանում և նրանում, վոր հաշվի գնհանման ու գործակատարին հանձնելու ժամանակ ի նկատի տոնինի միայն այն քանակը, վորը ծախվելու յեւ, այսինքն՝ բոլոր կարգի զեղչերն ու կորուստները զուրու եկած։ Դրա համար ամեն մի ապրանքից զուրու պիտի զալ նրանից սպասվող պակասորդը կամ բնական այլ կարգի կորուստները։ (Տես զրգի վերջում բերված «նորմաները»)։

Ապրանքների արդյուն զնահատելուց հետո՝ արժեքի ամրող զուրմարով ապրանքը հանձնվում և գործակատարին և գործակատարն այդ զուրմարի սահմաններում ել պատասխանառու յեւ։

Հետաղայում մնում է միայն ճիշտ հաշվեառման յենթարկել և խնութի տեղեկագիրներով անցկացնել գների բարձրացման ու իջնցման, ապրանքների գների գեղջման կամ անպետք ու փչացած ապրանքների դուրս գրելու դեպքերը:

Բացի այդ հնարավոր ե, զոր ապրանքի վաճառքից հետո լինեն և այնպիսի կորուստներ, զոր ապրանքն ընդունելիս նախատեսել անհնարին և և վորոնք ճիշտ ու ժամանակին հաշվառումից յենթարկելու վոչ մի միջոց չկա:

Այդ պակասորդներն են հաշիվների շտափ կատարման ժամանակ արված սիրաները, զորեւ զնորդի անրարեխոց կերպով ապրանքն առնել հեռանալը՝ առանց նրա արժեքը վճարելու և այն:

Բոլոր այդ կարգի կորուստների համար կոոպերացիայի գործնական կյանքում ընդունված և վաճառման ու պահպող ապրանքների արժեքի ընդհանուր գումարից անել $^{1/4}$ -ից մինչեւ $^{1/2} / 0$ զեղծ շրջանառությունից՝ այսինքն ծախված ապրանքների ընդհանուր գումարից:

Այլ խոսքով ասած՝ յեթե խանութի ապրանքների մնացորդը սուողման յենթարկվի փաստորին և համեմատվելով դրանի մնացորդին՝ ստացվի, զոր $^{1/4}$ -ից մինչեւ $^{1/2} / 0$ պակասում և, ապա այդ պակասորդը ընկերությունը ընդունում է իր հաշվին, իսկ եթե պակասորդն ավելի շատ $^{1/4}$ -ից մինչեւ $^{1/2} / 0$ ընկերության հաշվին ընդունելով՝ մնացորդի համար պատասխանառու յե համարվում գործառարարը (կամ բոլոր գործառարանները միասին, յեթե ընկերության մեջ խմբական պատասխանառվություն է կիրառվում):

Հասխառեանված պակասորդների տոկոսը $^{1/4}$ -ից պակաս ընդունել չի կարելի՝ յեթե կոոպերատիվում գործակատարների աշխատանքը միջակ արագություն ունի, խանութի պայմանները տանելի յեն և շատ մեծ հասարակությունն չի խոնդում խանությունում։ Այդ զեղչը $^{1/4}$ -ից պակասեցնելու կարիք չկա, քանի վոր զեղչը արգում և գործակատարին միայն այն դեպքում, յերբ փառական պակասորդ և յերեան հանվում։

Ի նկատի առնելով, վոր այս կերպ բոլոր կարգի պակասորդների, կորուստների ու զեղչերի հաշիվը պահելը շատ բարդ աշխատանիք է, սպառզական ընկերությունները, զործը հեշտացնելու համար կարող են ընդհանուր զեղչ անել բոլոր ապրանքների վրա, բոլոր տեսակի կորուստների համար (բացառությամբ ապրանքների փաթեթների, առպրակների, արկղեների համար արվող զեղչի—

տարայի քաշի)։ Այդ զեղչը կարող է արվել շրջանառության $^{1/2}$ -ից մինչև $^{1/4} / 0$ -ի չափով։ Միայն թե այս զեղչն արվում է զործակատարին այն դեպքում, յերբ փաստական ստուգման ժամանակ պակասորդ կա։ Յեթե պակասորդը չկա—զեղչ բոլորութին չի արվում։

Զեղչի այդ տոկոսը վորոշվում է մի շարք պայմաններ ի նկատի առնելով։

Որինակ՝ նշանակություն ունի այն հանգամանքը, թե կոոպերատիվում ի՞նչ ապրանքներ են ծախվում։ Վերևում ասվեց, վոր կորուստները մինում են միայն քաշով ծախվող ապրանքներից։ Պարզ է, վոր այն կոոպերատիվները, զորտեղ վաճառվում են հատավաճառ ապրանքները, զեղչի տոկոսը վորոշելիս—ցածր տոկոս պիտի ընդունեն։ Նույնպես և մասնակությունուրա ծախող կոոպերատիվները, մասավանդ յեթե նրանց ըբջանառության մեջ այդ տեսակի ապրանքները մեծ տոկոս են կազմում։

Պիտի ուշագրության առնել նաև խանութի գրությունը։ Այն խանութը, վոր արելի կողմն և նայում և չոր և —պարզ է, վոր քաշով ապրանքների ավելի մեծ կորուստ պիտի տա, քան խոնամի, հյուսիսին նայող խանութը։ Հետեւապես, պիտի զիջումներ անելիս այս ել ինկատի առնել։

Զեղչը վորոշելիս՝ պիտի ի նկատի առնել նաև այն, թե կոոպերատիվում ապրանքները զուտ քաշով են ծախվում, թե թղթի տոպրակներով, այլ և այն, թե թղթե տոպրակները զործակատարին տրվում են վորպես առհաշիվ ապրանք, թե իրեւ առեւրական անվերագ ծախք։

Հենց այդ պատճառով, զեղչի ընդհանուր տոկոսը վորոշելիս՝ բոլոր վերահշյալ հանգամանքները պիտի անպայման ինկատի առնել։

Պարզ է, վոր ընդհանուր զեղչն անելիս և տոկոսը վորոշելիս, զերեւում հիշված չը նախառեսնված կորուստները ևս մտնում են այդ տոկոսի մեջ։

6. ՔԱՇԻ ՊԱԿԱՍՈՐԴՆԵՐ

Լաբագային ապրանքներ

Ցորենի ալյուրը լցվում և 8 կիլոգրամ* ($^{1/2}$ վորթ), 16 կիլո-

* Կիլոգրամմը (կրծառված—կող) մէտրական կշռի միավորն է, հավասար և 1000 գրամի կամ 2 գրլ. 42 մոխալի։

Ծանոթ քարզ։

(1 փութ) և 80 կիլ. (5 փութ), տոպրակների մեջ: Այդ քաշը տոպրակներով միասին է: 80 կգ.-անոց տոպրակը առանձին կը չունեմ և 600 գրամմ, (5 փ. տոպրակի քաշը $1\frac{1}{2}$ գրկ. է):

Յեթե ալյուրը մաս-մաս և ծախվում՝ պարզ է, վոր 80 կգ.-ից (5 փութից) պիտի գուրս զալ 600 գրամ քաշի պակասորդը ($1\frac{1}{2}$ գրկ.): 8 և 16 կգ.-անոց տոպրակներին զեղջ չի արվում: Դատարկ տոպրակների արժեքը գործակատարի հաշվին առանձին և գրվում:

(Նման քաշի պակասորդը լինում և նաև ոռւսական ալյուրի բարձր տեսակների մեջ: Այդ ապրանքների առևտուրի համար ցորենի ալյուրի վերիը բերված որինակը կարող է միշտ հիմք լինունիվել: Բացի այդ՝ ոռւսական գյուղական կոռուպերատիվներին ծանոթ են մի շարք լարադաշին ապրանքներ—կորեկ, մի քանի տեսակ հատիկնեներ (բրյու), թեփ, (օրդիբա) և այլն—վորոնց տոպրակների արժեքը միշտ մացնում են ապրանքի քաշի մեջ: Մենք այդ մի քանի ապրանքները և նրանց քաշի պակասորդները զիտմամբ չենք բերում, վորովհետեւ հայ կոռուպերատորին գործնական կյանքում այդ որինակները պետք չեն դարձ: Ծանոթ թարգմանչից):

Վորովհետեւ այս կարգի ապրանքները յերկաթուղային կամ ջրային տեղափոխություններից պակասում են, խորհուրդ ենք տալիս ապրանքներն ընդունել կըսելով: Յեթե ապրանքն ստացվում է մեծ քանակությամբ (որինակ՝ վագոններով) և կըսելով ընդունելը տեխնիքական ու նյութական դժվարությունների հետ և կապված, այդ գեղքում պիտի ուշադրություն դարձնել, թե քանի տոպրակ ապրանք և ստացվում «անվնաս» (այսինքն տոպրակները լավ լցված առանց սպասովածքների), քանի՝ տոպրակ—պատրովածքներով են և քանիսից ապրանքն անկատած պակասել է: Վերջին դեպքում մեծ պատուղածքներ ունեցող տոպրակներն անվայան պիտի կրկին անվամ կշռել յեվ ապա միայն ընդունել:

Զերք կիսատականներով (մինչև 400 կիլոգրամ) կամ (25 փութ) և տակառներով (560-ից մինչև 400 կիլոգրամ) կամ մոտ (35-40 փութ) սովորաբար ծախվում և զուտ քաշով:

Տակառների արժեքը մացնում են ձեթի արժեքի մեջ: Յերեմի լինում եւ բաշի պակասորդ՝ տակառներում 6-8 կիլոգրամ (15-20 գրկ.), կիսատականներում—4-5 կիլոգրամմ (10-12 գրկ.), վորովհետեւ մի շարք գործարանների տակառների ամբողջ արժեքը չեն մացնում ձեթի արժեքի մեջ: Սովորաբար տակառների գինը հաշվում և առանձին:

Վորովհետեւ նախորոք հայտնի չե, թե ձեթը ստանալուց քա-

շի պակասորդ կա թե չե—խորհուրդ ենք տալիս ապրանքը տակառներով հանձնել գործակատարին իրեն ձեք (բրուտոս) և միայն ձեքը վաճառելուց հետո դատարկ տակառի հաշը գործակատարի հաշվից դուրս գրել:

Կարագ յուղի, հալած յուղի վերաբերմանը մենք խորհուրդ ենք տալիս ընդունել վերելում ցույց տված հիմունքները, այսինքն այդ ապրանքներն ամանով հանձնել գործակատարին և միայն ծախսելուց հետո ամանի խոկական քաշը գործակատարի հաշվեց դուրս գրել:

Կոորթներով ծախվող կարագ յուղը գնահատման պիտի յենք արկել ինչպես հատավաճառ ապրանք յեվ այնպես հանձնել գործակատարին՝ առանց վորեվի գեղջի:

Նավթը վաճառվում և տակառներով, մաքուր քաշով: Բնդունելիս պիտի ուշադրություն դարձնել տակառների զրության վրա: Ամառ ժամանակը տակառներից հոսում և («քցում ե») պիտի այդ հաշվի առնել:

Մինչև պատերազմը մասնավոր նավթավաճառները նավթի տակառները գատարկվելուց հետո հեյն ընդունում վորոշ տոկոս գեղջով:

Սապոնը ծախվում և արկղներով (16, 32, 48 և 96 կիլոգրամմանոց) և մաքուր քաշով: Մի քանի ֆիբրմաներ արկղները հետ են ընդունում: Ուրիշները արկղի փոխարեն 1200-ից մինչև 2400 գրամմ քաշի պակասորդ են թույլատրում 48 և 96 կիլոգրամմանոց արկղների մեջ:

Մաքուր սոդա (փոշի) ծախվում և մաքուր տակառներով ու մաքուր քաշով:

Լվացքի սոդա ծախվում և «քաշի պակասորդով». Պիտի ամեն անգամ տարան քաշել ու գուրս գրել ապրանքը վաճառելուց հետո:

Ազը նույնականացնելու (յեթե ծախվում և տոպրակներով) պիտի հանձնել գործակատարին մաքուր քաշով:

Շաբար (գլուխներով) բաց և թողնվում թղթով ու թոկով: Ամբողջ գլուխներով ծախիլիս՝ թղթի քաշը ապրանքի հաշվով և զնում: Յեթե ծախվում և մաս-մաս՝ թղթի և թոկի քաշը պիտի զեղջել գործակատարին: Յեթե թուղթն ու թոկը առանձին իրեն ապրանք կարելի յեւ ծախել, այդ գեղքում այդ ամենը պիտի գործակատարին հանձնել իրեն ապրանք—առհաշվի:

Վաճառքի ժամանակ ստացած փշուրները մաքուր և հավաքել և վերապնահատելով՝ առանձին ժամանակաշրջան գործակատարի հաշվից դուրս և գրվում գալիք հաջողության նույնականացնելու համար:

7/11/1922
Հ. Ա. ԱՅԱՍԻ ԱՅԱՍԻ ԱՅԱՍԻ

Սղցած ու կոտրատած շաբաթը ծախվում է մարտուր քաջով
Շաբաթավագը—նույնպես :

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆ .—Բոլոր տեսակի շաքարները խորհուրդների կողմէ առաջին ընդունել կչեռքից՝ մաքուր քաշն ստուգելուց հետո :

ԳԵՏԻԱԽՈՃՈՐԾ ալյուրը—ծախվում է 16, 40, 48 և 80 կիլո-
դրամմանոց տոպրակներով։ Քաշի պակասորդ է լինում 600-ից
900 գրամ։ Ազրանքը պիտի ընդունել մաքուր քաշով։

Անուշեղեն (կոնդիտերսկի) ապրանքները*

Հալվանի-ծախվում և թիթեղյա արկղով։ 4 կիլոգրամմանոց
(մոտ 10 գրկ.) արկղը 400 գրամմի (մոտ 1 գրկ.) քաշի պակա-
սորդ և ունենում։ Շատ գործարաններ այդ արկղները հետ են ըն-
դունվում ցածր տեսակի հալվայի դնով։

Շաբարի քաղցրավենի (վարենյե -մուրաբա) ծախվում ետակառներով: 16 կիլոգրամմանոց (մոտ 1 փուլթ) տակառի մեջ 800 դրամմ (մոտ 2 դրամ): Քաշի պակասորդ ե լինում:

Յերեմին վաճառվում են նաև ապակյա բանկաներում։ Քաշի
պակասորդն այս զեպքում պիտի գուրս բերել փաստորեն ստուգե-
լով քաղցրավենիների ու բանկաների քաշուն։

Ապակյա բանկաները գարսվում են զանազան մեծության արկրղներում։ Եինում են արկղներ, վորոնց մեջ գարսվում են 8 կիլոգրամմանոց—6 բանկա, 4 կիլոգրամմանոց—8 բանկա, 2,800 կիլոգրամմանոց—12 բանկա, 2 կիլոգրամմանոց—15 բանկա և 1,200 կիլոգրամմանոց—28 բանկա։

Շաքարի քաղցրավենին ծախում և հաճախ 400 գրամմանց (մոտ 1 կրկ.) բանկաներով. մի արկղում զարսվում և 40 բանկա: Ալպակյա բանկաների դիմաց սովորաբար քաշի սպակասորդ և լինում: Յերբեմն բանկաների արժեքն առանձին և հայտնում:

Ինչ գերաբերում և մոնպասելին, կարամելներին և զանազան քաղցր թղփածքներին, ոլիտի ի նկատի առնել հետեւյալը։ Այդ ասդրանքները ծախվում են արկղներով, թիթեղյա բանկաներով, կամ թղթի փաթեթներում։ Ցենտրոսոյուզի գործարաններից այդ կարգի ապրանքները բաց են բողնվում մաքուր քաշով, բացի մոնպասյելից։ Համենայն դեպք լավ կը լինի յեթ «բայի պակա-

^{*)} Այս բաժնում ցույց տված «քաշի պակասորդները» կիրառվում են գործարանային արդյունաբերության մեջ և վոչ թե մասնիկոնդիտերսկիների կողմէց :

սորդները» պարզվեն փաստորին այդ ապրանքները մաքուր քաշով հանձնելով գործակատարին :

Բացի այդ՝ նույն ապրանքներից շատ հաճախ վաճառվում են փոքրիկ բանկաներում, թիթեղյա արկղներում, կամ թղթի փաթեթներում։ Այս դեպքում ապրանքը հաշվելու յեզ գործակատարի վրան վորպես հատավանատ ապրանք, առանց հաշվի առնելու բաշի պակասուրդը։

Բակալեյսի ապրանքներ

Պարսկական բրինձ 100 և 104 կիլոգրամմանոց տոպրակներով։ Մի տոպրակից քաշի պակասորդ և լինում 800 գրամմ (մոտ 2 գրլ.)։ Խորհուրդ ենք տալիս ընդունել զուտ քայն ստուգեալով։

Արտասահմանյան բրինձ (յերկար հատիկներով) — ստացվում է սոսպակներով և առանց քաշի պակասորդի:

Սի շարք հատիկավոր ապրանքներ (կրոպա)՝ նույնագես ունենալու բարձր պակասորդ 400–600 գրամմ (1–1 ու կես գրլ.) յաւրաքանչյուր տուպրակում. ավելի լավ ե միշտ ընդունել քաշն ստուգելուց հետո:

Մանուֆակտոր

Բոլոր տեսակի չժեղենը, մահուդեղենը, շալերը և այլ մա-
նութակտուրան մեկ չորրորդ տոկոսի սահմաններում պակասորդ
կարող են տալ մանութակտուրայի բաժնի ամբողջ շրջանառու-
թյան գումարից :

Գալանտերեցա

Նույնի ինչ վոր մանուքակտուրան :

Վոտնամաներ, շորեր և սանրեղեց

Այս ապրանքների վրա վոչ մի դեղջ չելինում :

7. ՓԱԹԵԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ

թեև սպառողական կոռպերացիան սկզբունքով պիտի զուտ (մաքուր) քաշով ապրանքներ բաց թողնի, սակայն ընկերություններից շատերն ապրանքով քաշում են փաթեթի հետ միասին:

Այս գեղարքում փաթեթն ասլրանքի քաշի մեջ և մտնում . առվորաբար փաթեթներն ամրողջությամբ կամ մի մասով գործակատարին են տրվում՝ վորապես ասպրանք ինքնարժեքով : Այս բոլորը վերաբերվում են թղթի տապրակներին :

ինչ վերաբերում է փաթեթի թղթին (оберточная бумага), —
ապա այն տրվում է զործակատարին անհաջիկ զործածելու հա-
մար :

8 ԱՐԵՎՏՈՒՐԸ ԶՈՒՏ ՔԱՇՈՎ

Շատերն առարկում են զուտ քաշով առևտրի դեմ։ Այդ առարկություններն ընդհանուր առմամբ հետեւյալներն են։

1. Մի քանի ընդհանուր գործածության առարկաները դժվար ե զուտ քաշով ծախել և մասնավոր խանութպանի գների հետ մրցել, քանի վոր մասնավորն այդ ապրանքները ծախում ե «շատ հիմնական» փաթեթներով։

2. Այդպիսի ապրանքները ծախելիս կըուելու գործողությունը մի քիչ ավելի ժամանակ և պահանջում, քանի վոր հարկավոր և լինում ապրանքին դեմ կըեռքի հակառակ թաթը հավասարակըշուեցնել թղթի տոպրակի կամ փաթեթի քաշը և։

3. Փաթեթային ծախուրն ավելանում են։

4. Դժվար և ստուգել, թե արդյոք գործակատարը ձիշտ կերպով և կիրառում «զուտ քաշով» առևտուրը թե պատահական գնորդներին վաճառում ե «վոչ զուտ քաշով»։

5. «Չուտ քաշով» առևտրից ոգտվում են գլխավորապես ավելի թանդ ապրանքների գնորդները. այսինքն սակավթիվ սպառողներ, և վոչ թե սպառող մասսաները, վորոնք մեծ մասամբ եժան ապրանքներ են գնում։

Ինկատի առնելով այդ բոլոր դժվարությունները և հաշվի առնելով այն հանգամանքը, վոր կոռպերատիվները դեռ ևս իրենց վերադիրները չեն իջեցրել մինչև նախապատերազմյան չափերը, պիտի ժամանակավորապես հրաժարվել ապրանքները զուտ քաշով ծախելուց։

9. ՀԱՇՎԵԱՌՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԽԱՆՈՒԹԸ ԲԱԺԱՆՍՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պատասխանատու գործակատարի գումարային հաշվեառման ժամանակ նրա ստուգումը կատարվում է խանութի միացորդ պարաների ցուցակաղրումով։

Մի քանի մեծ կոռպերատիվներում հաշվեառումը հեշտացնելու համար խանութը բաժանում են մի քանի բաժանմունքների, տալով յուրաքանչյուր բաժանմունքի պատասխանատվությունը մի գործակատարի։ Յենթաղվում է դրանով գործը հեշտացնել։ Սակայն մենք նախազգուցացնում ենք, վոր չպետք է շատ տարվել խանութի պատասխանատվությունը մի քանի մարդկանց մեջ բաժանելով։ Դա շատ և բարդացնում է աշխատավոր գործը։

Համենայն դեպո՝ յեթե այդ բաժանումն անխուսափելի յե պիտի արվի, խորհուրդ ենք տալիս առաջնորդվել հետեւյալ ցուցումներով։

1. Բոլոր դեպքերում պիտի մսավաճառային մասը ջոկել և հենց մսավաճառին դարձնել այդ մասի պատասխանատուն, պահելով նրա համար առանձին գործակատարի որագիր։

2. Եռույն հիմունքներով կարելի յե անջատ պահեղ նաև հացի վաճառքի գործը։

3. Խանութի մասցած բաժինները պիտի մի համարել և ընդհանուր հաշվեառի յենթարկել, յեթե պատասխանատուն միայն մի հոգի յե։

4. Հաշվեառման ժամանակ խանութը բաժինների վերածելը, թույլատրելի յե միայն այն դեպքում, յերբ ապրանքներն իսկապես վոր իրարից ջոկ-ջոկ բաժիններում են զասավորված և առանձին գործակատարների պատասխանատվության տակ են գտնվում։

Իսկ յեթե ապրանքները բաժան-բաժան են արգում զանազան խմբավորումների արհեստականորեն, միայն հաշվեառումը հեշտացնելու նպատակով, ապա յերբեք տրված նպատակը չի իրականանում, այլ ընդհակառակը բոլոր հաշիվները խառնվում—խճվում են։ Վերջ ի վերջո հաշվեառումը կատարվում և ընդհանուր հիմունքներով։ առանձին բաժինների հաշիվները միացնվում են և ամբողջ տարվա աշխատանքն ի զուր ու անհետեանք և կորչում։

10. ՊԱՀԵՍՏՆԵՐԻ ՀԱՇՎԵԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

Պահեստում ապրանքները գտնվում են պահեստապետի պատասխանատվության տակ։ Ապրանքները պահեստում հաշվեառման են յենթարկվում գումարային արժեքով—ձիշտ այնպես՝ ինչպես խանութներում։

Պահեստներում ևս, ինչպես խանութներում, լինում են բնական կորուստներ և պակասորդներ, բայց, ի հարկե, գրանք համեմատաբար ավելի պակաս են։ Հաշվեառման համար պահեստապետին վորոշ նորմաներով զեղջ և արվում այդ պակասորդների ու կորուստների համար։

Պահեստի աշխատանքը սովորաբար ընթանում է ավելի բարեհաջող պայմաններում, քան խանութների աշխատանքը։ Պահեստներում մեծ հասարակությունը չի լինում։ Ապրանքը բաց և թողնվում մեծաքանակ (արկղներով, տոպրակներով և այլն),

Հենց այդ պատճառով պահեստապետը, յեթե բարեխիղը և ուշադիր ե, միշտ իր ժամանակին կը նկատի բոլոր թերություններն ու պակասությունները և ամեն մի պակասորդ յերեան հանելուց կը հրավիրի վարչության անդամին կամ վերստուգիչ հանձնաժողովի անդամին՝ ձեզակերպելու պակասորդը։ Պահեստում բացի «չորացման» կամ «ապրանքների հոսումից» առաջացող պակասորդները, այլ պակասորդ չի կարող լինել։

Պարզ է, վոր նորմայից դուրս պակասորդների համար պատասխանատու յե պահեստի վարչը (պահեստապետը)։

Մակարոնը և վերմիշելը ծախվում ե 8, 16 և 32 կիլոգրամմանոց (կես, 1 և 2 փութանոց) արկղներում։ Արկղի արժեքի դիմաց քաշի պակասորդ և լինում յուրաքանչյուր կիլոգրամմին 25 դրամ։

Հում սուրբ (չբոված, հատիկներով) ծախվում ե 48 և 80 կիլոգրամմանոց տոպլրակներում—առանց քաշի պակասորդի։

Զանազան տեսակի ընկույզներ վաճառվում են տոպլրակներով, ըստ վորում համարյա բոլոր դեպքերում լինում են քաշի պակասորդներ։ Նպատակահարմար և յուրաքանչյուր անդամ զուտ քաշը պարզել տարայի (տոպլրակի) կշիռն ստուգելով առանձին։

Զամիչ արկղներով 16-ական կիլոգրամմ (մոտ 1 փութ)։ Քաշի պակասորդ յուրաքանչյուր արկղում 500 գրամմ (1 ու մի քառորդ գրանքա)։

Զամիչ, կուրափա, բեդանա և չորացրած ծիրան ծախվում և տոպլրակներով 48-ական կիլոգրամմ։ Քաշի պակասորդը յուրաքանչյուր տոպլրակներում համար ե 800 գրամմ։

Չորացրած դեղձ (չափթալա) ծախվում ե 16 կիլոգրամմանոց տոպլրակներում։ Քաշի պակասորդ—400 գրամմ։ Տոպլրակներն անպետք են։

Զանազան չորացրած մրգեր (խնձոր, տանձ, դամբուլ և այլն) ծախվում և արկղներով, տոպլրակներով, հաղվագյուտ դեպքերում տակառներով։ Շատ նպատակահարմար ե այս կարգի բոլոր ապրանքների քաշի պակասորդը վորոշել փաստական ստուգումներով։

Գաստրոնոմիական ապրանքներ

Յերշիկ (մխած կամ յեփած), կալբաս, ոռուս-զվիցերական պանիր, հոլանդական պանիր և այլն—վաճառվում են զուտ քաշով, առանց պակասորդի։

Կալբասի հետ յեղած թոկը պիտի քաշել և դուրս գրել իրուք «քաշի պակասորդ»։

Զկնեղեն և ձկնկիր

Խորհուրդ ենք տալիս այս տոպլրակներն ստանալիս՝ զուտ քաշն ստուգել կշռելով տակառները, կամ արկղներն առանձին։

Մասնավորապես ձկնկիթը, վոր չորացող ապրանք և քաշի պակասորդը զանազան նորմաներ և ունենում, պիտի ընդունել զուտ քաշով։

Ձկնկիթը վաթաթվում և պերգամենտ թղթով կամ կտորով և հետո գրվում և արկղում։ Ձկնկիթի զգալի տոկոսը չորանում կամ կլչում է այդ վաթեթներին։ Դրա համար ձկնկիթի մի մասը պիտի ավելի ցածր գնով ծախել և ավելի ուշադիր հաշվեառման պիտի յենթարկել թե քաշի պակասորդները և թե չորացումն ու գների անկումը։

Միս

Միսը հաշվեառման պիտի յենթարկել մնացած բոլոր տոպլրակներից առանձին։ Միսը գործակատարին պիտի տրվի վաճառքի ամողջ արժեքով, վորը պարզվում է միսը զանազան տեսակների կտրելու ու զնահատելու միջոցով։*)

Առհասարակ մսի առեւտուրը շատ լուրջ ուշադրություն և պահանջում։ Հենց այդ պատճառով ել մսի առեւտրի հաշվեառումը պիտի կատարվի հատուկ ճշտությամբ։ Ի նկատի պիտի առնել մսի մի քանի տեսակների բաժանենելը, հինգու փշացող մսի գների անկումը կամ բոլորովին անպետքանալը, մսի լավ տեսակի գինը իշեցնելու դեպքերը՝ անզգույշ վաճառքի հետևանքով, վերջապես՝ մսի մանր կտրեների ու անպետք մասերի հաշվեառումն ու զեղջերը։

Այս գործը պիտի լավ ուսումնասիրվի մեր կոոպերացիայի աշխատաղների կողմից։

Հաց (կշռովի)

Վաճառքի ժամանակ հացը զգալիորեն չորանում և և նրա քաշը պակասում է։ Այդ պակասորդի չափը կախված է այն բանից, թե հացը խանութ և հանձնվում դեռ ևս տաք-տաք ժամանակ, թե արդեն բավականաչափ հովացած («սսուած»)։

*) Այն կոոպերատիվները, վորոնք մսի առեւտրով են զբաղվում, լավ կանեն, յեթե ունենան վ. Պ. Մախոնիցի «Մասյին գործը» դիրքը և առաջնորդվեն նրա ցուցումներով։

Համենայն գեպօ՞ յեթե հացը խանութին հանձնվում ե զուտաք-տաք, այս գեպքում իսկ նրա յուրաքանչյուր՝ մի կիլոգրամ-մից 15 գրամմ մի որվա ընթացքում պակասում ե, (ուրիշ խոռոշով ասած՝ յուրաքանչյուր 100 գրամն քեց մեկ ու կես գրամանքա) :

Այս բոլորը կախված ե հացի առետրով զրադվող կոռպերա-
տիվի ընդհանուր սարգ ու կարգից, գործակատարների ուշադիր
վերաբերմունքից : Ընդհանուր առմամբ այս առետուրը ևս յու-
րաքանչյուր կոռպերատիվ պիտի հատուկ ուսումնասիրության
յենթարկի :

Զանազան ապրանքներ

Մելիքը լարային (приволочные гвозди) գործարաններից
բաց և թողնվում մի կելուզրամմին 25-ից մինչև 85 գրամմ պակա-
սորդով։ Արկղների ընդհանուր քաշը մեխի հետ միասին (բրուտ-
տո) զանազան և լինում։ Միշտ պիտի զուտ քաշը փաստորեն
սոսուցել։

Մուլատելինի ապրանքները (զանազան ներկեր, յուղեր և այլն) միշտ ունենում են քաշի պակասորդ. պիտի յուրաքանչյուր առանձին գեպքում ստուգումներ կատարել և տարայի (փաթեթի կամ արկղի) քաշը դուրս դրել գործակատարեց :

Ապակեղեց

Հախճապակյա և այլ տեսակի ապակեղենը տեղափոխության ժամանակ տալիս է բավականին կոտրած ամանեղեններ։ Այս կախված է թե՛ տեղափոխության պայմաններից և թե՛ փաթեթի գրությունից։ Սովորաբար 2—3 տոկոսի սահմաններում «կոտըրվելը» նորմալ է համարվում, սակայն յեթե փշրված ամանեղենը ավելի մեծ տոկոս է կազմում, այդ նշանակում է ճանապարհին շատ անհոգ են վերաբերվել ապրանքին կամ թե ապակեղենը վատ ե գարսած ու փաթաթած։ Լավ կը լինի հենց յերկաթուղուց ընդունելիս ուշք դարձնել թե ինչ գրության մեջ է ապրանքը, վոր սովորաբար ստացվում է տակառներով կամ դարձանի ու թղթի փաթեթներով։ Յեթե կոտրած ապրանքի տոկոսը 3-ից բարձր լինի, խորհուրդ ենք տալիս արձանագրություն կազմել։

Ապակեղենը (ապակյա ամանները) յերեմի կարող և տալ ամենի մեջ տոկոսի պակասորդ :

II. «ԲՆԱԿԱՆ ՊԱԿԱՍՈՐԴՆԵՐԻ» ԶԵՂՋԻ ԶԱՓԸ 0/0 0/0-ՌՎ:

Համար	Ապրանքների անունները	Զեղչի չափը		ԾԱՌՈՅՈՒԹՅՈՒՆ
		Մակածախառ- ոի ժամանակ	Մեծաքանակ գործարքներ (ոլանես)	
1	Ցորենի ալյուր	0,75	0,25	
2	Գարի ալյուր	0,5	0,25	
3	Համիկացին ապ- րանքներ (կրո- պա) սիօհո, լո- րի, գարի ցորեն և այլն:	0,75	0,25	
4	Թեփ (օբրյու)	0,5	0,25	
5	Յողեր--հալած, կարագ, ձեթ	1,5	0,5	
6	Շաքար— (բուր- տեսակները)	0,5	0,25	
7	Չամիչ, չորաց- րած զեղձ, բար, խնձոր, առանձ կ այլն	1,25	0,25	
8	Բըինձ (բուր- տեսակները)	0,75	0,25	
9	Սապոն (քաշով ծախվող տեսակ- ները)	2,00	1,00	
10	Նազթ	2,00	1,00	
11	Անիգի յուղ	2,00	1,00	
12	Կուսլը սկիպի- տար	1,25	0,5	
13	Մազութ ամեն			



II. «ԲՆԱԿԱՆ ՊԱԿԱՍՈՐԴՆԵՐԻ» ԶԵՂՋԻ ԶԱՓԸ^{0/0} ^{0/0}-ՌՎ

Համար	Ապրանքների անուններ	Զեղջի չափը		ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
		Մասնածախ	Մհծաբանակ	
		սիմոնածախ սիմոնակ	գործարքներ (այսինք)	
14	Թեսակի համառ- քինակ յուղերը	3,00	1,5	
15	Առողջապուծի սոսինձ և այլն	1,00	0,5	
16	Հանքային ներ- կեր և այլ ներ- կեր	0,5	0,25	
17	Սոդա (մաքուր), Սոդա (լվացքի)	1,00	0,25	
18	Բարակային բարակային ալ- յուր	0,5	0,25	
19	Հոմա սուրճ (հա- տիկներով)	1,25	0,5	
20	Աղ:	2,5	1,00	
21	Հանական մե- խեր	1,25	0,25	
22	Դաշտան, չոր- իստ և այլն	0,75	0,25	
23	Կաղամբ թարմ	1,75	1,00	
24	» աղ զրած	1,25	0,5	
25	Կարան, զանա- զան թոկեր շու- րան	0,5	0,25	

II. «ԲՆԱԿԱՆ ՊԱԿԱՍՈՐԴՆԵՐԻ» ԶԵՂՋԻ ԶԱՓԸ^{0/0} ^{0/0}-ՌՎ

Համար	Ապրանքների անուններ	Զեղջի չափը		ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
		Մասնածախ	Մհծաբանակ	
		սիմոնածախ սիմոնակ	գործարքներ (այսինք)	
26	Զեղջի (թարմ)	2,5	1,00	1. Ամսու ժամանա- կը ձկնեղենը պիտի ուղարկերաբար կը ունի և «Հարացումը» հաշվի առնել: 2. Զեղջենի փորո- տիքը, վոր դորձ չե- ածվում, փաստորեն զիջվում և նրա քաշը պարզեցվ և այդ ար- ձանագրելով հատուկ ակտով:
27	Մակարոն, վեր- միշել:	2 լիգ 4 ^{0/0}	0,5 100 ^{0/0}	
28	Բնկուղեղեն	0,75—1,25	0,25—1,00	
29	Մնացած բուր- տպրանքները (բնդկեններ, բանջարեղեններ արժուածիք, թարմ պղպղեղ և այլն)	1,00	0,5	Եյս ապրանքները շաբ- չանառության չնչին ^{0/0} և կազմում, հենց այդ պատճառով կարելի յէ բնդկեններ պեղջի չափի $\frac{1}{4} 0/0$ -ովաճեստի համար և $\frac{1}{2} 0/0$ -մանածախով համար
30	Անուշեղեն (կոնֆետների) ապրանքներ	2,5	0,5	
31	Հալվա			Մասնածախ ժամանակ

II. «ԲՆԱԿԱՆ ՊԱԿԱՍՈՐԴՆԵՐԻ» ԶԵՂՋԻ ԶԱՓԸ ^{0/0 0/0} ՌՎ:

Համար	Ապրանքների անունները	Զեղջի չափը		ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
		Մանրածախ սի ժամանակ	Խճառածախ գործարներ (պահեստ)	
31	Քաղցրավենիներ (տակառներով)	2,5	1,00	
32	Քաղցրավենիներ (4—5 կիլոգրամ բանկաներով)	1,25	0,25	
33	Կարտմելներ	1,25	0,25	
34	» կա- կուզ տեսակները	2,00	0,5	
35	Մոնդասիե	1,5	0,25	
36	Թխվածքներ	3,00	1,00	
37	» (ալելի չոր տեսակները)	1,25—2,5	0,25—1,00	
38	Մեզը	2,5	1,00	
Գ. Գասրոն-				
սիս				
39	Կալբաս (ալիստ.)	2,5	1,00	{ Պարանի քաշը առան ձին և զեղջում
40	» (յիմած)	1,5	0,5	
41	Ցերչիկ	2,00	0,5	
42	Պանիր (Շվեյց- արական, և Հո- լանդական)	1,5—2,5	0,25—0,5	
43	Մածուն, կաթ, սմետան և այլ կաթնամթերքն.	2,00	1,00	
44	Խնձոր, տանձ և այլ թարմ մրգեր	1,5	0,5	
45	Հաց	3,00	—	
46	Մանուֆակտ.	0,25	—	

ՀԱՆՁՆՎԱԾ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ

(Թարգմանական)

1. Զայտանվ. — Կոռալերացիայի համառոտ գասընթաց:
2. Պակերովա. — Սպառկոռպերացիայի անցյալն ու ներ-
կան:
3. Շալով. — Հաշվապահության համառոտ ձեռնարկ:
4. Կոժաննի. — Իինչ պետք ե իմանա ամեն մի բանվոր:
5. Կուլյուսեվ. — Լինինն ու կոռպերացիան:



ԳԻՆՆ 30 ԿՈԹ.